



ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Պատվիրակություն Հայաստանում

Քաղաքական, տնտեսական, մամուլի և տեղեկատվության բաժին

Երևան, փետրվարի 26, 2016թ.

## **ԵՄ Բարձր ներկայացուցիչ, փոխնախագահ Ֆեդերիկա Մոզերինին փետրվարի 29-ին և մարտի 1-ին կայցելի Ադրբեջան և Հայաստան**

Շարունակելով նախորդ տարվա վերջում մեկնարկած այցելությունների շարքը դեպի Արևելյան գործընկերության երկրներ, Ուկրաինայից և Վրաստանից հետո, ԵՄ Բարձր ներկայացուցիչ, փոխնախագահ Ֆեդերիկա Մոզերինին՝ երկուշաբթի՝ ա.թ փետրվարի 29-ին կժամանի Ադրբեջան իսկ հաջորդ օրը՝ մարտի 1-ին կայցելի Հայաստան:

Ադրբեջանում՝ Բարձր ներկայացուցիչը հանդիպումներ կունենա նախագահ Իլհամ Ալիևի և արտգործնախարար Էլմար Մամեդյարովի հետ: Բաքվում գտնվելու ընթացքում՝ Բարձր ներկայացուցիչը կմասնակցի նաև «Հարավային գազային միջանցք» նախագծի գծով Խորհրդատվական խորհրդի նախարարների նիստին՝ փոխնախագահ Մարոշ Շեֆչովիչի հետ միասին: Նա կհանդիպի նաև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ:

Հայաստանում՝ Բարձր ներկայացուցիչը կհանդիպի նախագահ Սերժ Սարգսյանի և արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի հետ, խորհրդարանում ներկայացված մի շարք քաղաքական կուսակցությունների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ:

[http://eeas.europa.eu/statements-eeas/2016/160226\\_01\\_en.htm](http://eeas.europa.eu/statements-eeas/2016/160226_01_en.htm)

Հավելյալ տեղեկությունների համար՝

Մայա Կոսիյանչիչ՝ +32 228 6570

Ադամ Կազնոցսկի՝ +32 228 9359

Հասցե՝ Ֆրիկի 21, 0002, Երևան, Հայաստան  
Այցելուների համար մուտքը Պոռոշյան փողոցից  
Հեռ.՝ (374 10) 54 64 94, ֆաքս՝ (374 10) 54 64 95

[Delegation-Armenia@eeas.europa.eu](mailto:Delegation-Armenia@eeas.europa.eu)

[http://eeas.europa.eu/delegations/armenia/index\\_en.htm](http://eeas.europa.eu/delegations/armenia/index_en.htm)